

[1] Դուրս գրման ամսաթիվ			<b>Հաշիվ վավերագիր</b> (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
15	Ապրիլ	2022 թ.		Բ	1204406875
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
15	Ապրիլ	2022 թ.		Սերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
			8 Փետրվար, 2022 թ.	Թարգմանչական ծառայությունների մատուցման պայմանագիր թիվ ՀԳԴ-2-22	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
Արձանագրություն 2					
[7.1] ՀՂՄ կտրոնի համար					

<b>Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի</b>								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	8	2	2	7	5	6	8	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	ՍՈՖՅԱ ՍԵՐՈԲՅԱՆ Անհատ ձեռնարկատեր (ԱՁ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570064545140100					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍՆՈՎՆ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՂՄ. 28 22							
[13] Լրացուցիչ տվյալներ								

<b>Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի</b>								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆին նախ աշխ. գործ. վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՄԱՐԳԱՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր		Համար					
			Ամսաթիվ					

<b>[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը</b>						
№№ Ը/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (ռովանդակությունը)	Զգալի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակացույցային քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Ցան Անդրենի վերաբերյալ 03.03.2022թ. որոշման հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	11.5	1000		11500
2	Թիվ 17991921 քրեական գործով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	8	1000		8000
3	Ռոման Նեգրեչևիկովի վերաբերյալ 18.03.2022թ. որոշում հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	6.5	1000		6500
4	Թիվ 20124321 քրեական գործով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	70	1000		70000
5	Սպարտակ Գրիգորյանի վերաբերյալ միջնորդության ռուսերեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	20.5	1000		20500
6	12164822 քրեական գործով հայերեն-ռուսերեն գրավոր թարգմանություն	էջ	6	1000		6000
7	Վիկտորյա Նուրբեկյանի վերաբերյալ Կարինե Տաշույանի բողոքի ռուսերեն-հայերեն գրավոր թարգմանություն	էջ	6	1000		6000
<b>Ընդամենը</b>						<b>128500</b>

Ծառայություն  
մատուցող  
(աշխատանք  
կատարող)

SEROBYAN SOFYA 6401890169

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

15/04/2022 18:12:28

Ծառայություն  
(աշխատանք)  
ստացող

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

20/04/2022 15:24:04

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### Թարգմանիչ հրավիրելու մասին

23 մարտի 2022թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանոյանս, ուսումնասիրելով ՌԴ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի մեղադրանքով հետախուզման մեջ գտնվող **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻՆ (YAN ANDREEV)** հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ ԵԴ/1276/06/21 որոշումը,

### Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության քրեական Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Ջվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, 2021 թվականի նոյեմբերի 25-ին՝ ժամը 06<sup>00</sup>-ին, բաժին են բերման ենթարկել, Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի (կաշառք ստանալ) մեղադրանքով հետախուզվող, ՌԴ և Իսրայելի պետության քաղաքացի **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻՆ (YAN ANDREEV)**, ում նույն օրը՝ ժամը 08<sup>00</sup>-ին, ձերբակալել են:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԵԴ/1187/06/21 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻ (YAN ANDREEV)** նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ ԵԴ/1276/06/21 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻ (YAN ANDREEV)** նկատմամբ հանձնելու համար 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորում կիրառելու մասին:

ՌԴ իրավասու մարմինների կողմից տրամադրվել է **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻ (YAN ANDREEV)** հանձնման արարողակարգում անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 24-ին որոշում է կայացվել հանձնման թույլատվության մասին, որը **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻ (YAN ANDREEV)** շահերի պաշտպանի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան (հերթական դատական նիստը նշանակվել է 2022 թվականի փետրվարի 24-ին)

Բացի այդ, **ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻ (YAN ANDREEV)** շահերի պաշտպանի կողմից վերաքննիչ բողոքներ են ներկայացվել նաև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ԵԴ/1187/06/21 և 2021

թվականի դեկտեմբերի 30-ի թիվ ԵԴ/1276/06/21 որոշումների դեմ, որոնց վերաբերյալ դեռևս որոշումներ չեն կայացվել:

Հաշվի առնելով, որ 2022 թվականի փետրվարի 28-ին լրանում է ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻՆ (YAN ANDREEV) կալանքի տակ պահելու ժամկետը, մինչդեռ նրա պաշտպանի կողմից ներկայացված՝ հանձնման թույլտվության մասին որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի կապակցությամբ դեռևս որոշում չի կայացվել, իսկ այդ որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի համաձայն կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան, որից հետո հարկ է անդրադառնալ ՌԴ իրավասու մարմիններին վերջինիս փոխանցման հարցին, 2022 թվականի փետրվարի 16-ին միջնորդություն էր ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատատարան ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻՆ (YAN ANDREEV) հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ:

Դատարանի 2022 թվականի մարտի 3-ի թիվ ԵԴ/1276/06/21 որոշմամբ միջնորդությունը մերժվել է:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻՆ (YAN ANDREEV) չի տիրապետում հայոց գրավոր լեզվին, իսկ Սոֆյա Սերոբյանը ռուսերեն լեզվի համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ՅԱՆ ԱՆԴՐԵԵՎԻՆ (YAN ANDREEV) հանձնելու համար կալանավորելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 3-ի թիվ ԵԴ/1276/06/21 որոշման գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես ռուսերեն լեզվի գրավոր թարգմանիչ հրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AS սերիայի թիվ 0538862, տրված 13.05.2019թ., 006-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ,

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը՝ երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի  
տեղակալ, արդարադատության

առաջին դասի խորհրդական

Ա. Կոստանդյան

Արագն սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասխանատրվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

*Արամ*

«23» ..... Ծագրվ. 2022թ.

*Արթուր Աղբալյան*

ՈՐՈՇՈՒՄ  
ԹԱՐԳՄԱՆԻՉ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18-ը մարտի 2022թ.

ք. Երևան

«Ղատախազության Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ղատախազության ղատախազ, երկրորդ դասի խորհրդական Թ. Հատուցյանը» ոստանապետի թիվ 17991921 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2021 թվականի հոկտեմբերի 21-ին՝ ժամը 13:20-ին, «Ոստիկանության Կենտրոնական բաժին է բերման ենթարկվել Հովհաննես Նորայրի Հակոբյանը, ով բացառությամբ հայտնել է, որ 2021թ. սեպտեմբերի 29-ին՝ ժամը 12:45-ի սահմաններում, Երևան քաղաքի Գայի պողոտա 16 հասցեում գտնվող «Մեգամոլ» առևտրի կենտրոնում գործող «Սպորտ Մաստեր» հագուստի խանութից գաղտնի հափշտակել է «Columbia» ֆիրմայի վերնաշապիկ:

2021թ. հոկտեմբերի 23-ին՝ ժամը 09:30-ին, նշված հագուստի խանութի տնօրեն Էրիթ Անդրանիկի Գառգյանից վերոգրյալի կապակցությամբ ընդունվել է հաղորդում, ով հայտնել է, որ վերնաշապիկի արժեքը կազմել է 29.500 ՀՀ դրամ:

2021թ. հոկտեմբերի 27-ին, նախապատրաստված նյութերը ոստիկանության Կենտրոնական բաժնից ենթակայության կարգով ստացվել են ոստիկանության Նոր Նորքի բաժին:

Դեպքի առթիվ 01.11.2021թ. «Ոստիկանության Նոր Նորքի բաժնում» ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17991921 քրեական գործը:

2021թ. նոյեմբերի 3-ին թիվ 17991921 քրեական գործն ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին և ընդունվել վարույթ:

Նամաքնության ընթացքում անմիջականորեն ծագած կասկածանքի շուրջ որպես վկա հարցաքննվել է Հովհաննես Նորայրի Հակոբյանը, նշելով, որ 2021 թվականի սեպտեմբերի 29-ին՝ կեսօրից հետո, գտնվելով Երևան քաղաքի «Մեգա Մոլ» առևտրի կենտրոնում գործող «Սպորտ Մաստեր» խանութ-սրահում մտնեցել և կախիչի վրայից վերցրել է 29.500 ՀՀ դրամ արժողության «COLUMBIA» ապրանքանիշի տղամարդու վերնաշապիկ, որից հետո իբրև թե փորձելու համար մտել է հանդերձարան, որտեղ աշխատակիցներից գաղտնի այն թաքցնելով իր մոտ դուրս է եկել նշված խանութից և գաղտնի հափշտակել հագուստը, այնուհետև փողոցում վաճառել է իրեն անձանոթ պատահական քաղաքացու 15.000 ՀՀ դրամ գումարով:

2021 թվականի նոյեմբերի 30-ին որոշում է կայացվել Հովհաննես Նորայրի Հակոբյանին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2021 թվականի նոյեմբերի 30-ին որոշում է կայացվել Հովհաննես Նորայրի Հակոբյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին:

Նույն օրը Հովհաննես Նորայրի Հակոբյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

30.11.2021 թվականին թիվ 17991921 քրեական գործի վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

09.12.2021 թվականին Հովհաննես Նորայրի Հակոբյանը հայտնաբերվել է և քրեական գործի վարույթը վերսկսվել է, կատարվում է նախաքննություն:

09.12.2021թ. Հովհաննես Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով:

28.02.2022թ. թիվ 17991921 քրեական գործով կազմվել է մեղադրական եզրակացություն և նույն օրը ուղարկվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազություն:

Նկատի ունենալով, որ քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին հանձնվում է թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները, իսկ քրեական գործով մեղադրյալ Հովհաննես Նորայրի Հակոբյանը չի տիրապետում հայերենին և անհրաժեշտ է մեղադրական եզրակացությունը թարգմանել ռուսերեն, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 54-րդ հոդվածով, 277-րդ հոդվածի 4-րդ մասով.

#### ՈՐՈՇԵՑԻ՝

1. Մեղադրական եզրակացությունը հայերենից ռուսերեն թարգմանելու համար որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին:
2. Որոշման մասին հայտնել թարգմանիչ Սոֆյա Վազգենի Սերոբյանին, նրան պարզաբանել թարգմանչի հրավումքները ու պարտականությունները և նախազգուշացնել թարգմանչի պարտականությունները չկատարելու համար նախատեսված պատասխանատվության մասին:

Ավան և Նոր Նորք վարչական շրջանների  
դատախազության դատախազ



Թ.Հարությունյան

Թարգմանիչ՝ *Սոֆյա Վերդյան*

18 Տարբեր, 2022թ.

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## Թարգմանիչ հրավիրելու մասին

23 մարտի 2022թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանոյանս, ուսումնասիրելով ՌԴ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասի (խարդախություն) մեղադրանքով հետախուզվող, Ռոման Անատոլիի Նագրեշնիկովին հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը և այն քննելու Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 18-ի թիվ ԵԴ/0179/06/22 որոշումը,

## Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի, քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, 2022 թվականի փետրվարի 10-ին, Շարմ Էլ Շեյխ-Երևան թիվ 993 չվերթի ժամանումից հետո՝ հայտնաբերել և ժամը 09<sup>15</sup>-ին, բաժին են բերման ենթարկել, Ռուսաստանի Դաշնության Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) ներքին գործերի նախարարության Արխանգելսկի մարզի Օնեժսկի շրջանի ՆԳ վարչության միջոցով 2016 թվականի հունիսի 7-ից, այդ երկրի քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասի (խարդախություն) մեղադրանքով հետախուզվող, Ռոման Անատոլիի Նագրեշնիկովին, ում նույն օրը՝ ժամը 12<sup>15</sup>-ին, ձերբակալել են:

Ռոման Նագրեշնիկովի հայտնաբերման վերաբերյալ փաստաթղթերը, նույն օրը փոխանցվել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԴ/0092/06/22 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը՝ Ռոման Նագրեշնիկովի նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

Ստացվել է ՌԴ իրավասու մարմինների միջնորդությունը՝ Ռոման Նագրեշնիկովի այդ երկրի քրեական օրենսգրքի ՌԴ քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասով քրեական հետապնդման ենթարկելու նպատակով հանձնելու մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի պահանջները պահպանելու, անձի հանձնման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ է ժամանակ, մինչդեռ 2022 թվականի մարտի 21-ին լրանում է Ռոման Նագրեշնիկովի նկատմամբ կիրառված կալանավորման ժամկետը, ինչի համար 2022 թվականի մարտի 14-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

Դատարանի 2022 թվականի մարտի 18-ի թիվ ԵԴ/0179/06/22 որոշմամբ քավարարվել է միջնորդությունը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ Ռոման Նագրեշնիկովը չի տիրապետում հայոց գրավոր լեզվին, իսկ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում ռուսերեն լեզվով թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Ռոման Նագրեշնիկովին հանձնելու համար կալանավորելու մասին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 18-ի թիվ ԵԴ/0179/06/22 որոշման ռուսերեն հաստատված գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Վազգենի Սերոբյանին (անձնագիր՝ AS սերիայի թիվ 0538862, տրված 13.05.2019թ., 006-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ,

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական

Ա. Կոստանդյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտախանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

Սոֆյա Սերոբյան

Սոֆյա Սերոբյան

«23» Մայիսի ..... 2022թ.

## ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

«21» մարտի 2022թ.

ք. Եղվարդ

• Կոտայքի մարզի դատախազի տեղակալ, առաջին դասի խորհրդական Կ.Սուքիասյանս, ուսումնասիրելով մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 20124321 քրեական գործն՝ ըստ մեղադրանքի Գարի Սերգոյի Ավետիսովի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 6-րդ կետերով.

### Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում քննված թիվ 20124321 քրեական գործի նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է, որ Գարի Սերգոյի Ավետիսովը, ավագակցությամբ՝ ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու դիտավորությամբ նախնական համաձայնության գալով Անդրանիկ Դողորյանի և այլ անձանց հետ, նախապես ձեռք բերելով 16 մմ տրամաչափի որսորդական ողորկափող հրացան, առնվազն թվով երկու հատ 16 մմ տրամաչափի փամփուշտներ, թվով 6 հատ սև գույնի պլաստմասե ժապավեն սեղմիչներ (որոնք կարող են օգտագործվել որպես ձեռնաշղթա) և կացին, ինչպես նաև պատրաստելով կտորե սև դիմակ, 2018 թվականի հուլիսի 6-ին՝ ժամը 23-ի սահմաններում, այլ անձանց հետ՝ իր անվամբ վարձակալությամբ վերցված և Անդրանիկ Դողորյանի կողմից վարած «Վազ 21214» մակնիշի «35 QF 966» հաշվառման համարանիշների ավտոմեքենայով, ինչպես նաև Արտավազը Ղազարյանի վարած «Կամազ» մակնիշի «05 LU 796» հաշվառման համարանիշների ու Ներսես Խաչատրյանի վարած «Կամազ» մակնիշի «34 VF 879» հաշվառման համարանիշների երկու բեռնատարներով գնացել են Կոտայքի մարզի Գառնի գյուղի «Վանքի լիճ» կոչվող սարատեղ:

Հասնելով նշված վայր՝ 2018թ.-ի հուլիսի 07-ի ժամը 01:50-ի սահմաններում, Նազիկ Հովհաննեսի Ամիրյանին պատկանող՝ 80.480.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության թվով 2012 հատ գառներն ու ոչխարներն ավագակցությամբ անհատուց, շահադիտական նպատակով հափշտակելու հանցավոր մտադրությունն իրականացնելու համար, Գարի Ավետիսովը, կրելով նախապես պատրաստած վերոնշյալ կտորե սև դիմակը, Անդրանիկ Դողորյանի և այլ անձանց հետ հանցակցությամբ ապօրինի մուտք են գործել անասնապահներ Նելլի Մամեի Դարվեշյանին, Լուսինե Վահագնի Վարդանյանին ու նրա որդիներ Ռաֆիկ և Վահան Վարդանյաններին, Խազալ Հասանյանին ու նրա ընտանիքի անդամներին՝ ամուսնուն՝ Սամվել Խալիլյանին, անչափահաս երեխաներ Լիաննա և Ռոմիկ Խալիլյաններին հատկացված ու բնակարան հանդիսացող տնակներ, որի ընթացքում Գարի Ավետիսովը բռնել է Խազալ Հասանյանի ձեռքերից և քաշելով ցանկացել է վերջինիս տանել դեպի «Նիվա» մակնիշի ավտոմեքենան, իսկ Ա.Դողորյանը միջամտել է և Խ.Հասանյանի խնդրանքներից հետո վերադարձել են վերջինիս տնակ, որտեղ Անդրանիկ Դողորյանը որպես զենք օգտագործվող կացնով կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքներ է տվել Խազալ Հասանյանի և վերջինիս անչափահաս երեխաներին՝ պահանջելով ձայն չհանել և դուրս չգալ տնակից, հակառակ դեպքում կկացնահարի, իսկ դրսում գտնվող անձինք «կխփեն նրանց» ու իրենց հանցավոր գործողությունների մասին իրավապահ մարմիններին չտեղեկացնելու համար՝ առանց հափշտակելու նպատակի, Խազալ Հասանյանի տնակի սեղանի վրայից վերցրել է անասնապահ Հայկ Թորոսյանի «Սամսունգ» մոդելի բջջային հեռախոսը:

Այնուհետև Գարի Ավետիսովը, կրելով գործով չպարզված 16 մմ տրամաչափի որսորդական ողորկափող հրացանը, Անդրանիկ Դողորյանի և այլ անձանց հետ հանցակցությամբ անասնապահներ Նելլի Դարվեշյանի, Քոչո Մուրադյանի, Հայկ Թորոսյանի, Գառնիկ Գևորգյանի նկատմամբ բռնություն գործադրելով՝ այն է նրանց ձեռքերից քաշելով, տարել են Լուսինե Վարդանյանի տնակ, որտեղ Անդրանիկ Դողորյանը, ինչպես նաև Գարի Ավետիսովը, նախապես ձեռքբերած իրենց հանցավոր մտադրությունն իրականացնելու նպատակով կյանքի ու

առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու, այն է՝ հրացանով կրակելու սպառնալիքներ տալով, տնակում գտնվող Նելլի Դարվեշյանին, Լուսինե, Ռաֆիկ և Վահան Վարդանյաններին, Քոչո Մուրադյանին, Հայկ Թորոսյանին և Գառնիկ Գևորգյանին կարգադրել են դուրս չգալ՝ հայտնելով, որ իրենք «ԱԱԾ» աշխատակիցներ են, եկել են գեներալ Մանվել Գրիգորյանի «ունեցած-չունեցածը տանեն»։ Դրանից հետո Ա.Դողորյանը, բացելով գառների և ոչխարների պահման վայր հանդիսացող ցանցապատ տարածքի մետաղական ցանցը, այլ անձանց հետ հանցակցությամբ առնվազն թվով 50 հատ գառներ ու ոչխարներ են բռնել հիշյալ բեռնատարները, իսկ այդ ընթացքում Գարի Ավետիսովը հսկել է Լուսինե Վարդանյանի տնակը և այնտեղ գտնվող անձանց՝ միաժամանակ կյանքի ու առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու, այն է՝ հրացանով կրակելու սպառնալիքներ է տվել տնակում գտնվող վերոնշյալ անձանց և պահանջել դուրս չգալ։

Այնուհետև Ա.Դողորյանը, վերադառնալով Լուսինե Վարդանյանի տնակ, Ռաֆիկ Վարդանյանին, Քոչո Մուրադյանին, Հայկ Թորոսյանին և Գառնիկ Գևորգյանին կյանքի ու առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքներ տալու միջոցով, այն է՝ ինչպես Գարի Ավետիսովի, այնպես էլ դրսում գտնվող անձանց կողմից նրանց վրա կրակելու, ինչպես նաև այդ ընթացքում Հայկ Թորոսյանին կացնով հարվածելու և սպանության սպառնալիքներ տալով, պահանջել է թուր ոչխարներն ու գառները քշել-տանել Գողթ գյուղի ուղղությամբ, որի ընթացքում Ռաֆիկ Վարդանյանի կամքը ճնշելու և իրենց ենթարկելու համար նաև մեկ անգամ հարվածել է վերջինիս այտին, իսկ տնակում գտնվող անձանց նույն սպառնալիքներն է տվել՝ պահանջելով դուրս չգալ։

Դրանից հետո Գարի Ավետիսովն Անդրանիկ Դողորյանի և այլ անձանց հետ հանցակցությամբ բացահայտ առևանգել են վերոնշյալ սպառնալիքների ազդեցության տակ գտնվող Ռաֆիկ Վարդանյանին, Քոչո Մուրադյանին, Հայկ Թորոսյանին և Գառնիկ Գևորգյանին՝ վերջիններիս կամքին հակառակ դուրս բերելով իրենց բնական միկրոսոցիալական միջավայր հանդիսացող բնակության վայրից ու տեղափոխելով այլ վայր։ Մասնավորապես, Ռաֆիկ Վարդանյանը, Հայկ Թորոսյանը, Գառնիկ Գևորգյանը և Քոչո Մուրադյանը, տվյալ իրադրությունում վախենալով իրենց կյանքի ու առողջության համար իրական վտանգ սպառնացող ոտնձգության իրագործումից, դուրս են եկել Լուսինե Վարդանյանի տնակից, որտեղ Քոչո Մուրադյանը դիմել է փախուստի, իսկ Ռաֆիկ Վարդանյանը, Հայկ Թորոսյանը և Գառնիկ Գևորգյանը՝ Անդրանիկ Դողորյանի, Գարի Ավետիսովի և այլ անձանց պահանջով, ինչպես նաև անմիջական հսկողությամբ, այն է՝ Գարի Ավետիսովը, կրելով գործով չպարզված 16 մմ տրամաչափի որսորդական ողորկափող հրացանը, ևս մեկ այլ հանցակցի հետ քայլելով, իսկ Անդրանիկ Դողորյանն իր վարած «Վազ 21214» մակնիշի «35 QF 966» ավտոմեքենայով հսկել են նրանց, որի արդյունքում վերջիններս Գողթ գյուղի ուղղությամբ մոտ 2,5 կիլոմետր քշել-տարել են ոչխարների ու գառների հոտը, որտեղ Անդրանիկ Դողորյանի ու Արտավազը Ղազարյանի միջև ծագել է վիճարանություն, որի արդյունքում վերջինս ու Ներսես Խաչատրյանը հիշյալ բեռնատարներով հեռացել են, ինչից հետո Ռաֆիկ Վարդանյանը, Հայկ Թորոսյանը, Գառնիկ Գևորգյանը քարեր են նետել Անդրանիկ Դողորյանի վարած «Վազ 21214» մակնիշի «35 QF 966» հաշվառման համարանիշի ավտոմեքենայի ուղղությամբ, որի ընթացքում Գարի Ավետիսովն իր մոտ գտնվող հիշյալ հրացանից արձակել է թվով 2 կրակոց։ Այդ ժամանակ Անդրանիկ Դողորյանը հիշյալ ավտոմեքենան վարել է ոչխարների ու գառների հոտի մեջ, վրաերթի է ենթարկել թվով 40 հատ ոչխարներ ու գառներ, որից հետո Գարի Ավետիսովի և գործով չպարզված այլ հանցակցի հետ միասին հիշյալ ավտոմեքենայով դիմել են փախուստի։

Վերոգրյալ արարքը կատարելու համար Գարի Սերգոյի Ավետիսովին 03.10.2020 թվականին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 131-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 3-րդ, 6-րդ կետերով, իսկ որպես խափանման միջոց է ընտրվել գրավը։

2022 թվականի հունվարի 20-ին թիվ 20124321 քրեական գործով կազմվել է մեղադրական եզրակացությունը և քրեական գործի հետ ուղարկվել Կոտայքի մարզի դատախազություն։

Դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 2022 թվականի հունվարի 25-ին հաստատվել է թիվ 20124321 քրեական գործով մեղադրական եզրակացությունը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի կարգով քրեական գործն

տրվել է հետագի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Նախաքննությանը պարզվել է, որ թիվ 20124321 քրեական գործով մեղադրյալ Գարի Ավետիսովի չի տիրապետում հայերենին, այլ տիրապետում է ռուսերենին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կնիքով ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները:

Հաշիբ առեկով, որ ԱԶ «Սոֆյա Սերոբյան» թարգմանչական գրասենյակի ղեկավարն էր, համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է ներառանցնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճարելի դատարանի 2017 թվականի մայիսի 04-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական գիրքորոշումներին, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ, 277-րդ հոդվածներով՝

### ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 20124321 քրեական գործով քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալ Գարի Ավետիսովին մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների, ինչպես նաև մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին դատախազի որոշման ղեկավարում կառուցված թարգմանությունները հանձնելու համար, դրանց ռուսերեն լեզվի թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ իրավիք է ԱԶ «Սոֆյա Սերոբյան» թարգմանչական գրասենյակի թարգմանչուհի Սոֆյա Սերոբյանին /անձնագրի՝ ԴՏՈ ԳՏՆԵ 2, տրված՝ 13.03.2019թ., ՕՈԵ-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ. և դրան ծանուցանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր երավունքներին և պարտականություններին:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարել պատժվում է տուգանքով՝ նխազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմանը՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Կատարելի մարզի  
Բաղախազի տեղակալ՝

Կ.Սուքիասյան

Ստացյա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ քրավունքներն և տարտախախտություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված տարտախախտության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

*Սոֆյա Սերոբյան*

«21» 03 2022թ.

*Սոֆյա Սերոբյան*

**ՈՐՈՇՈՒՄ**  
թարգմանիչ հրավիրելու մասին

31.03.2022թ.

Գ. Մելիքյան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Գ. Մելիքյան, ուսումնասիրելով Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունից ստացված Սպարտակ Գրիգորյանի վերաբերյալ հանձնման միջնորդությունը,

**ՊԱՐՁԵՑԻ՝**

30.03.2022թ. ին Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունից ստացվել է Սպարտակ Գրիգորյանի հանձնման միջնորդությունը՝ կից փաստաթղթերով՝ ռուսերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ ՍՈՖՅԱ ՍԵՐՈՑՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կապած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճարելի դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով և հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է [...] ստորագրության հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը,

**ՈՐՈՇԵՑԻ**


1. Սպարտակ Գրիգորյանի հանձնման միջնորդության և կից փաստաթղթերի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ՍՈՖՅԱ ՍԵՐՈՑՅԱՆԻՆ (անձնագիր AS0538862, տեղեկանք տրված ՀՀ ԱՆ 27.12.2019թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն սոցիալապես պաշտպանողական աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմանը՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության  
վարչության դատախազ

Գ. Մելիքյան

Արագու ասու որոշման օրինակը, ՀՀ քրեական դատախազության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված պարտականությունն մնաին ստիպագրուցված եմ:

Նստարկումիս  
Սահմա Սերոբյան



«31» 03 2022թ.

## ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

06 ապրիլի 2022թ.

ք.Երևան

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատնիսազ Գ.Հ.Մուրադյանս, ուսումնասիրելով թիվ 12164822 քրեական գործի նյութերը,

### ՊԱՐԶԵՑԻ՝

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննված թիվ 12164822 քրեական գործն ըստ մեղադրանքի վլադիմիր Գերմանի Հակոբյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Նախաքննության ընթացքում մեղադրյալ վլադիմիր Հակոբյանը հայտնել է, որ չի տիրապետում գրավոր հայերենին:


Նկատի ունենալով, որ մեղադրյալը բավարար չափով չի տիրապետում դատավարության լեզվին, իսկ Սոֆյա Սերոբյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

### ՈՐՈՇԵՑԻ

1. Մեղադրական եզրակացության ռուսերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Սոֆյա Սերոբյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AS0538862, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 27.12.2019թ.) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:
3. Թարգմանչին պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է առանց


քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չիրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստում իրեն հայտնի դարձած տեղեկությունները:

Երեթունի և Նուբարաշեն վարչական շրջանների  
ավագ դատախազության դատախազ՝

 Գ.Շ.Նուբարյան

Սրացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանարվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝  
2021թ.

  
Ս. Սերոբյան

«06» սեպտեմբերի 2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԹԱՐԳՄԱՆԻՉ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԿԵՐԱՐԵՐՅԱԼ

«13» ապրիլի 2022թ.

ք. Երևան

Շենգավիթ • վարչական շրջանի դատախազության դատախազ Վ. Սմբատյանու  
տուննասիրելով Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունում ստացված Կարինե  
սշույանի բողոքը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2022 թվականի ապրիլի 13-ին Շենգավիթ վարչական շրջանի դատախազությունում  
տացվել է Կարինե Տաշույանի բողոքը:

Արատի ունենալով, որ բողոքի և կից փաստաթղթի հայերեն թարգմանության  
նորաժեշտությունը՝ հանգում են այն հետևության, որ պետք է ներգրավել թարգմանիչ բողոք  
և կից փաստաթուղթը հայերեն թարգմանելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատափարության օրենսգրքի 15-  
րդ և 83-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սոֆյա Վազգենի Սերոբյանին ներգրավել թարգմանիչ՝ բողոքի և կից փաստաթղթի  
հայերեն գրավոր թարգմանություն կատարելու համար:

2. Սոֆյա Վազգենի Սերոբյանին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ  
հոդվածով թարգմանիչ կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար վրա  
հասնող քրեական պատասխանատվության մասին:

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ

ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶ

Վ. ՍՄԲԱՏՅԱՆ

Թաշույանի • Սմբատյան Վահագն Վերոգրյալ

13.04.2022թ.